

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 17 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 1931

ԹԻԻ 19

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՕՐՈՒԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Ս. ԳՐԻԻ ԲՐԻՍՏՈՍԸ

ՎԵՐ. ՅԱԿՈԲ ՇՆՈՐՀՕՔԵԱՆ

ՀՈԳԻԻՍ ՎԵՐԵԼԻԸ

Հ. ՅԱԿՈԲԵԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՊԱՆԻՈՅ ՄԷՋ ԱԻԵՏ. ԱԶԱՏՈՒԹՆ. ՎԵՐ. Ե. ԿԵՕՔԿԵՕՋԵԱՆ

ՍԹԵՐԼԻՆԻ ԱՆԿՈՒՄԸ

ՓՐՈՖ. Զ. ՊԷՋՃԵԱՆ

ԴԻՏԱԿԱՆ ԲՐՈՆԻԿ

ՔԱՂԵՅ՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ԱՅԼԵԻԱՅԼ

ՃՈՐՃ ՄԷԹԻՍԸՆԻ ԱՆՄԱՀ ԵՐԳԸ

ՍԱԻԱՌՆԱԿԻ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԸ

ԱՆԳԼԻՈՅ ԹԱԳԱԻՈՐԻՆ ԹՈՇԱԿԸ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ԱՇԽԱՐՀԻՍ ՎՐԱՅ ՈՍԿԻԻ ՔԱՆԱԿԸ

ՀԱՅ ԿԵԱՆՔ

«ՉԱՆԻՑ» ԷՋԸ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՏԳԱՐԱՆ ԴՈՂԷՃ ՀԱՆԷՊ

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, օտարեկան բաժնեգրին է 150 դրուշ սուրի. Սուրիայ համար, և մէկ ու կէս տուար՝ արիշ բաժնեգրին համար:

Յօդուածներու բնագիրները չեն ղըրկուիր եթէ այդ մասին փափաք չյայտնուի յօդուածագիրներու կողմանէ. չհրատարակուող յօդուածներու համար պէտք է ղրկել փոստի ծախսը:

Յօդուածները պէտք է գրուին թուղթին մէկ էջին վրայ մեկանով, գիւրընթեռնի և մաքուր կերպով:

ՀԱՂԷՊԻ ԿՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՆՈՒՐԱՍՈՒՆԵՐՈՒ ՑԱՆԿ 1930 ՅՈՒՆԻՍ 4-1931 ՅՈՒՆԻՍ 31. Շարունակութիւն.

Հալէպէն՝ Տր. Գէորգ Սարգիսեան 1 ոսկի Օսմ., Այնթապցիներու Հայրենակցական Միութիւն 3 ոսկի Օսմ. Տիւրքիին Արուսեակ Շիրաճեան 50 Ս. Դ. Մատամ Մօնիյէ 100 Ս. Դ., Տիւ. Երջանկուհի Սինանեան 200 Ս. Դ. Ազէզէն՝ Պրն. Արմենակ Թօփճեան 20 ղրշ. արծաթ, Պրն. Յովհաննէս Պէտոյեան 10 ղրշ. արծաթ, Պրն. Տիգրան Զափար Յարութիւնեան 20 ղրշ. արծ., (Շար.)

ԲԱՑԱՌԻԿ ՊԱՏԵՂՈՒԹԻՒՆ ՄԵՒՍ

ՄԻ ՄԻԱՅՆ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԿԱՐՈՏ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Հայաստանի Կոչնակին տարածման բաղձացող բարեսէր ազգային մը՝ հաճած է, այս օտար եւս կրկնել իր \$500.00. ի նուէրը, որպէս զի, մեր կողմէն ալ նոյնքան ղեղչով մը, 500 հայ կարօտ գաղթականներու ղիւրութիւն ընծայուի, թերթը ստանալու:

ՍԻՒՐԻԱ, ՅՈՒՆԱՍՏԱՆ, ՊԱՆՔԱՆԵԱՆ ՈՒՐԻՇ ԵՐԿԻՐՆԵՐ, ՊԱՂԵՍՏԻՆ ԵՒ ԿԻՊՐՈՍ գտնուող Հայ կարօտ գաղթականներ պիտի կրնան օգտուիլ այս բացառիկ պատեհութեան, Հայաստանի Կոչնակին բաժանորդագրուելով, ՄԻ ՄԻԱՅՆ 3.00 տուարի, փոխանակ 5.00 տուարի որ սովորական բաժանորդագրինն է:

Զեղչեալ բաժանորդագրինը 3.00 տուար պէտք է ղրկել կանխիկ՝ Այս ղեղչուած գրինը պիտի տեսնուի կարգ տեսն մը միայն, մինչեւ լրանայ 500 հոգ բաժանորդի արձանագրութիւնը:

ՓՈՒԹԱՑԷՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԻՂ ԳԵՆ ԲԱՆԻ ՓԱԿՈՒԱԾ ԶԷ ՊԱՏԵՏՈՒՔԻՆԵՐ:

THE GOTCHNAG PUBLISHING CO.

331— Fourth Ave., New York, N. Y., U. S. A.

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 17 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 1931

ԹԻԻ 19

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՕՐՈՒԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Քրիստոնէութիւնը իբր ընկերային հասարակական ազդակ նոր փուլի մը մէջ կը մտնէ այսօր: Հին ըմբռնումի մը համեմատ կրօնքը պէտք էր իր ազդեցութիւնը տարածել միայն կրօնական շրջանակներու մէջ: Բայց ներկայիս եկեղեցիին նեղ շրջանակներէն դուրս ելլելով՝ անիկայ հրապարակիչած է տնտեսական, քաղաքական, ճարտարարուեստական և միջազգային յարաբերութեանց ամէն մարզերուն մէջ իր ազդեցութիւնը յայտնելու, ոչ թէ զանոնք իր դերիչխանութեան ենթարկելու այլ Աւետարանի լոյսին համեմատ իր բարոյացուցիչ ուժով զանոնք ազնուացնելու համար: Աւետարանը պէտք է միայն եկեղեցիներու մէջ քարոզչութիւն և կրօնական շրջանակներու մէջ յարգութիւն, այլ նաև մարդկային կեանքի ամէն յարաբերութեանց մէջ:

Օրուան մէկ երկրորդ կարևոր նշանն է Լատին երկիրներու մէջ յառաջ եկած կրօնական ազատութիւնը, որ եթէ յարմար հոռնելու մէջ ընթացք առնէ մեծ օրհնութեան պատճառ կրնայ ըլլալ նոյն երկիրներուն կրօնական մակարդակը բարձրացնելով:

Արեւելքի մէջ կրօնական շարժումը բոլորովին տարբեր ընթացքի մը կը հետեւի: Աւետարանն ու Քրիստոսը ոչ քրիստոնեայ ժողովուրդներու մէջ սկսած են ցուցնել իրենց յեղափոխիչ ազդեցութիւնը: Ասիկայ կը յայտնուի

երկու կերպերով: Աւետարանի ազդեցութեամբ Արեւելքի սկսած է իր կրօնքին նոր ձեւ մը տալ, անոր պարունակութեան նոր արժէքներ վերազրել, զայն գաղափարականացնել: Իսկ ուրիշ շատեր Աւետարանն ու Քրիստոսը կ'ընդունին այս կամ այն կերպով բայց կը մերժեն ընդունիլ պաշտօնական քրիստոնէութիւնը նոյնիսկ զայն կը քննադատեն իբր Աւետարանի և Քրիստոսի ոգիին հակառակ կրօնք մը:

Ասիկայ եղած է մէկը կարևոր պատճառներէն, որոնք քրիստոնեայ եկեղեցիները մղած են իրարու մօտենալու, զիրար հասկնալու, իրարու հետ գործակցելու: Վերջին տասնամեակին այս ուղղութեամբ կարևոր ձեռնարկներ եղած են, որոնց արդիւնքը ըլլալով յառաջ եկած են հարաւային Հնդկաստանի Զինաստանի, Գանատայի, Սկոտլանդի զանազան յարանուանութեանց եւ Մ. Նահանգաց Ժողովական և Քրիստոնէական յարանուանութեանց միացեալ եկեղեցիները, Անկլիկան եկեղեցիին եւ Արեւելեան հին եկեղեցիներուն միջեւ հաստատուած բարեկամութիւնն ու հասկացողութիւնը, և այլն: Գործը սկսած է և թէպէտ դժուար բայց յաւանք ընթացքի մը մէջ կը գտնուի:

Ահա այս կէտերը աւելի լաւ լուսաբանելու կը ծառայեն ստորեւ ներկայացուած հատուածները:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԷՄ

Օգոստոսի սկիզբը ժընեւի մէջ կա-
րեւոր ժողով մը կատարուեցաւ տիեզե-
րական խաղաղութեան դատին նուիր-
ուած: Տասն և մէկ մեծ կրօնքները
ներկայացնող մեծ մարմին մը կազ-
մուած էր միջազգային խաղաղութիւնը
հաստատելու, պատերազմը արգիլելու
համար: Ահա այս մարմինն 60 հոգի-
ներէ բաղկացեալ գործադիր կոմիտէն
երեք օր նիստեր ունեցաւ, որոնց միջո-
ցին ծրագրուեցաւ 1932 ին, 1934 և
1936 ին երեք մեծ կրօնական համաժո-
ղովներ պուժարել: Հոս կը ներկայաց-
ուէին Մեծն Բրիտանիա, Ֆրանսա, Ա-
մերիկա, Գերմանիա, Աւստրիա, Զուի-
ցերիա, Փոլոնիա, Հնդկաստան, Զի-
նստտան և Ճաբոն: Աշխարհահռչակ
փորձագէտներ մասնաւոր գրութիւն-
ներ ներկայացուցին պատերազմի
պատճառները ցուցնող: Այսպէս՝ պա-
տերազմի տնտեսական, ճարտարա-
րուեստական, ցեղային, կրօնական, զի-
տական, մշակութային, հրապարակա-
գրային (մամուլ) պատճառները խորա-
քապէս ուսումնասիրուած էին: Ապա
Մ. Հիւպէր տը Մոնպրիզոն (Ֆրանսա-
ցի) տեղեկագրեց թէ մեծ կրօնները որ-
չափ ոյժ կրնան տրամադրել խաղա-
ղութեան դատին համար:

«Ձէնընկէցութիւնը իբր բարոյական
հարց» ընդհանուր նիւթին շուրջ կարճ
բայց կարեւոր ճառեր խօսուած են:
Նիւ Եօրքցի Հրեայ Բապպի Տր. Սթի-
ֆըն Ուայզի ճառը մասնաւոր ուշա-
դրութեան արժանի էր: «Եթէ ես
քրիստոնեայ ըլլայի» ըսած է ան, հո-

գիս պիտի նուաստանար տեսնելով թէ
քրիստոնէութիւնը ի՞նչ կերպիրով դա-
րերէ ի վեր պատերազմը ներելի նկա-
տած, զայն դրդած և նոյն իսկ անկէ
շահեր ապահոված էր: Եւ ապա այս
լուսաբանող հետեւեալ պարագան յի-
շած է: Ծ. Է. Սայմընտս Իտալիա,
հետաքրքրական իրերու մէկ վաճա-
ռատան մէջ, փայտէ խաչելութեան
պատկեր մը գտած է: խաչը 21 մատ-
նաչափ հրկար և անոր չորս ծայրերը
պղինձով ծածկուած էր: Սաչելութիւնը
անարուեստ կերպով քանդակուած էր:
Բայց ետեւը պղինձէ կոճակ մը ունէր
որ երբ մատով ճնշուէր դաշոյն մը երե-
ւան կ'ելլէր: Բապպի Ուայզի համար
խաչի և դաշոյնի այս չարաշուք կա-
պակցութիւնը զարհուրելի օրինակ մըն
էր:

Որոշուած է նաեւ ժընեւի մէջ միջ-
կրօնական հաւաքօթ մը սարքել աղօ-
թելու և ճառերու համար Փետրուարի
մէջ դումարուելիք զէնընկէցութեան
համաժողովէն անմիջապէս առաջ:

* *

Սեպտեմբերի սկիզբը Քէյմպրիճի
մէջ կատարուած է խաղաղութեան դա-
տին նուիրուած ժողով մը նախաձեռ-
նութեամբ «Եկեղեցիներու միջոցաւ Մի-
ջազգային Բարեկամութեան համար Հա-
մաշխարհային Դաշնակցութիւն» անուն
կազմակերպութեան: Բացի Կաթոլիկ
եկեղեցիէ կարեւոր քոյր երկիրները և
ՅՅ ազգերը իրենց ներկայացուցիչները
գրկած են:

ԼՈՁՅՆԻ ԺՈՂՈՎԸ

1927 ին Լոզանի մէջ գումարուած
«Կարգի և Հաւատքի Համաժողով»-ին
գործը շարունակելու համար կոմիտէ

մը նշանակուած էր, որ Օգոս. 18—21 ին իր
ժողովը ունեցաւ Հայ Լէյի մէջ նախա-
դահութեամբ Եօրքի Արքեպիսկոպոսի

և մասնակցութեամբ մօտ 90 անդամներու, որոնք կը ներկայացնէին բացի կաթոլիկ եկեղեցիէ բոլոր քրիստոնեայ եկեղեցիները: Հոս որոշուած է 1938ին գումարել երկրորդ Հոգանի համաժողովը: Կոմիտէի նիստին մէջ յայտնուած է թէ այս ժողովին նպատակը եկեղեցական միութիւն յառաջ բերել չէ այլ եկեղեցիներու մէջ զիրար հասկնալու համար առիթ ընծայել: Ասկէ առաջ աստուածաբանական մարմին մը եկեղեցիներու վարդապետութիւնները ուսումնասիրելու պաշտօն տրուած էր: Այս ժողովին մէջ շնորհքի մասին հրմտալից մեծ ուսումնասիրութիւն ներկայացուցաւ: Եւ յայտնի եղաւ որ զանազան եկեղեցիներու նոյն նիւթին

չուրջ իրարմէ տարբերող վարդապետութեանց շատ մը կէտերը իրենց էութեան մէջ գրեթէ նոյնն են: Ռուս մը, Փրոֆ. Արսէնիւշի, կը յայտնէ որ «եթէ Ս. հաղորդութեան սեղանին շուրջ բոլորին հաւաքուելը անմիջապէս կարելի չէ, հոգեւոր հաղորդակցութիւն կարելի է բաժնեկող մեր փորձառութիւնը: Մեր վարդապետութիւնները բազմաաւելով չգահանանք, այլ իրարու սորվեցնենք թէ անոնք, զոր օրինակ Ս. հաղորդութիւնը, ինչ կը նշանակեն մեր կեանքին մէջ: Ս. հաղորդութեան միացուցիչ ոյժը այնքան մեծ է որ նոյն խի այդ մասին խօսակցել մեզ իրարու պիտի մօտեցնէ:»

Ե. Ք. ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Օգոստոս 4—9 ին Մ. Նահանգաց քրիվէնտ քաղաքը Ե. Ք. Ընկերակցութեանց Համալսարանային Դաշնակցութեան ի. համաժողովը տեղի ունեցաւ մասնակցութեամբ 47 երկիրները ներկայացնող 1028 պատուիրակներու: Ներկայիս 54 երկիրներու 10300 քաղաքներուն և գիւղերուն մէջ Ե. Ք. Ը. ի ճիւղեր կազմուած են:

Այս ժողովը նշանաւոր եղաւ անոր մասնակցող կրօնական, կրթական, քաղաքական մեծահոգակ դէմքերով, իր խորհրդակցած նիւթերով և տուած որոշումներով: Կրօնական հարցերէ զատ ներկայ միջազգային հրատապ խնդիրները՝ տնտեսական տագնապ, պատերազմ և զէնընկէցութիւն և այլն՝ խորհրդակցութեան նիւթ եղան: Այս բոլոր խորհրդակցութիւններու մէջ տիրող գաղափարը եղած է գործակցութիւն:

Ներկայ տնտեսական և քաղաքական շատ մը հարցերը իրենց խորքին մէջ հոգեւոր են: Տնտեսական կեանքին հոգիին մէջ պէտք է փոփոխու-

թիւն մը կատարուի գանոնք լուծելու համար: Տիրող սկզբունքը պէտք է ըլլայ գործակցութիւն և ոչ մրցակցութիւն, ծառայութիւն և ո՛չ շահ: Ահա այս է երիտասարդ պատուիրակներուն և անոնց առաջնորդներուն պատգամը:

Համաժողովին նախագահը Տր. Ճ. Բ. Մաթի խօսքերը յատկանշական են երիտասարդ և չափահաս սերունդներու միջեւ գործակցութեան մասին: Ան կ'ըսէ. «Պատմութեան մէջ եղած չէ ատեն մը երբ առաջնորդները այսօրուան չափ պէտք ունեցած ըլլան իրական գործակցութեան: Ներկայ առաջնորդները պէտք է ջանան իրենց ոյժերը բազմապատկել երիտասարդները վարդապետելով: Ասիկա կարելի է անոնց առիթ տալով իրենց բոլոր ոյժը գործածելու համար: Շատ մը ազգերու ու ցեղերու երիտասարդներուն ծառայութեան նուիրուած կեանքիս մէջ սորված եմ վստահութիւն ունենալ երիտասարդութեան վրայ, մասնաւորապէս այն ատեն երբ ծանր պատասխա-

նատուութիւններ տրուած են անոնց: զղջացած չեմ երիտասարդներու վատ-
եւ այս 40 է աւելի տարիներու միջոցին հելուս համար:»

ԼԱՏԻՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆԸ

Սպանիա կաթողիկ ըլլալէ աւելի ճիգուիթական երկիր մըն էր, այսինքն Յիսուսեան կարգէ կրօնաւորներու իշխանութեան ենթակայ էր, քան Աւետարանական Սպանացիներուն մերժուած էր կատարեալ քաղաքացիական իրաւունքները վայելիլ: «Մարիամ Յիսուսէ զատ ուրիշ զաւակներ ալ ունեցած է ըսող մը կը հալածուէր, կը բանտարկուէր: Բայց հիմա հանրապետական վարչաձեւի հռչակումով Բողոքականը և Կաթողիկը հաւասար գետնի վրայ դրուեցան, և կրօնական ազատութիւն տրուեցաւ: Այսպէս Սպանիոյ Աւետարանականները, որոնք 200 տեղերու մէջ ժողովարաններ ունին, մեծ առիթի առջեւ կը գտնուին: Փասթէօր Ծ. Քապրէ-րա իր ոգևորիչ ճառով և քարոզներով աւետարանականութիւնը կը մղէ իր կռիւմը իրապոք՝ հելուս: Ան ըսած է. «Հոգեւոր և Աստուածային տեսակէտէն մե-

ծագոյն Սպանիոյ մը համար պէտք է աշխատինք: Մեր մարտակոչը պէտք է ըլլայ «Սպանիա Քրիստոսի համար»:

Ֆաշիսթ Իտալիոյ մէջ ալ Աւետարանականները ազատութիւն կը վայելին: Ուսուցիչներու կոչուած Իտալացի Բողոքականները ունին Աստուածաբանական ճեմարան մը, որուն փոխ-նախագահը Փրոֆ. Ժորժանի Լիւձձի, հրատարակած է Ս. Գրքի մէկ նոր թարգմանութիւնը՝ պատկերազարդ և ծանօթութիւններով ճոխ:

Այս նոր թարգմանութեան Սաղմոսներու և Նոր Կտարանի մասէն 500 օրինակներ կրթական նախարարութեան նուիրած է Իտալիոյ լաւագոյն բարձր դպրոցներուն բաշխելու համար: Այս նուէրը մեծ սիրով ընդունուած է: Մուսոլինի այս օրինակները ստանալուն պէս ունկնդրութեան առիթ մը կուտայ և մեծ համակրանք կը ցուցնէ փրօֆէսորին:

ՔՐԻՍՏՈՍ ԹԷ՞ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ

Արեւելքի մէջ ազգայնական հոգիի և ուրիշ հոսանքներու պատճառաւ Արեւմուտքի դէմ զգացումները կը շարունակեն անպաստ ուղղութիւն մը ունենալ: Արեւելքի գիտակցութիւնը կը զօրանայ: Քրիստոնէութիւնն ալ իբր Արեւմտեան ազգերու կրօնքը նըկատելով՝ ասոր դէմ ալ հոսանքը բաւական զօրաւոր է:

Մօտերս Կանտիի հարցուեցաւ թէ եթէ Հնդկաստան անկախ հռչակուի միսիոնարական դարձունէութեան հանդէպ ի՞նչ դիրք պիտի յռնէ: Կանտին պատասխանած է որ «եթէ լոյսի միսիոնարական բարեգործութիւնը, բժշկական և կրթական աշխատանքները պի-

տի կատարուին քրիստոնէութեան չահուն մարդեր ուսալու, միսիոնարներու պէտք չունինք: Քանզի ունէ ժողովուրդին կրօնքը քրիստոնէութեան չափ իրեն համար լաւ է:»

Իսկ Հնդկի Պրահմին մը առիթով մը կ'ըսէ. «Ես Պրահմիներու Պրահմինն եմ, և սակայն ես անշուշտ պիտի ուզէի Քրիստոսի նմանիլ: Հնդկաստան քրիստոնեայ պիտի ըլլայ, բայց առանց երբեք ինքզինքը քրիստոնեայ կոչելու:»

Մարդիկ կը հակառակին ոչ թէ Քրիստոսի այլ մեր ապրած քրիստոնէութեան: Պէտք է Քրիստոսի վկայիլ և ոչ թէ մեր քրիստոնէութիւնը ծախիլ:

ՄԵՐ Ս. ԳԻՐԲԸ

(Շար. և Վերջ)

Ս. ԳՐԻՆ ԲՐԻՍՏՈՒՐ

Մեր Ս. Գրքէն կը սորվինք որ երկինքի մուտքի տոմար անկեղծութիւն է, անոր թագաւորը՝ Բրիստոս: Երկինքի թագաւորութեան զինուորներուն զէնքն է սէր, նպատակը՝ ծառայութիւն: Ծառայել մեր կարծածէն և երեւակայածէն մեծ բան մըն է: Ծառայել՝ անօթին կերակրելով, ծարաւին ջուր խմցնելով, մերկին հագուստ եւ անապաստանին տուն տալով, բանտարկեալը այցելելով և հիւանդին օգնելով: Երեսն Բրիստոս ըսաւ. «Ես ձեր մէջը իբր ծառայող մըն եմ»:

Ծառայել՝ ծառայողը կը մեծցնէ. քարոզին մեծագոյն բարիքը նոյնինքն քարոզիչէ կը վայելէ: Մայրը ինքը կը մեծնայ մինչ իր զսակը կը մեծցնէ: Այն բարիքը զոր մարդ առանձինն կը վայելէ գեղեցկութիւնէ գուրկ է: Աշխարհիս վրայ ամէնէն տղեղ բանը անձնասիրութիւնն է, որ ծառայութեան կեանքին թշնամին է:

Եսը և անոր փառքը որչա՛փ շուտ կ'անհետանայ: Մեծն Կիւրոսի գերեզմանը գանուեցաւ որուն վրայ սապէս արձանագրուած էր. «Ո՛վ մարդ, ով որ ալ ըլլաս և ուսկից որ գալու ըլլաս դարձի՛ր և հոս նայէ. ես Կիւրոսն եմ՝ Պարսիկ կառավարութեան հիմնադիրը, ինծի մի՛ նախանձիր, մարմինս ափ մը հող ծածկած է»:

Սէլսըս կայսրը գահը ելլելէն ետքը օր ետքը սպաննուեցաւ: ԺԲ. Կարոլոս արքայուհեցաւ: Ա. Կարոլոս իբր ոճրագործ դատապարտուեցաւ: Ֆրանսայի Լուի Ֆիլիպ թագաւորը կէսօր ատեն փախուստ տուաւ: Մեծն Նափոլէոն, որ իր մէկ հրամանովը Եւրոպայի

ճակատագիրը կ'որոշէր, իր արքայուհեցաւ, Ս. Հեղինէ կղզիին մէջ մեռաւ: Բայց Բրիստոս յաւիտեանս կը մնայ:

«Ձեզմէ ամէն մէկը նոյն միտքը թող ունենայ, որ Բրիստոս Երեսնի մէջ էր, որ Աստուծոյ կերպարանքը ունենալով, յափշտակութիւն մը չսեպկեց Աստուծոյ հաւասար ըլլալը: Հապա անձը ունայնացուց ծառայի կերպարանք առնելով՝ մարդոց նման ըլլալով. և կերպարանքը մարդու պէս գտնուելով ինքզինք խոնարհեցուց, մինչև մահուան հնազանդ եղաւ, և այն ալ խաչին մահուան» (Փիլպ. 2. 5—8):

Երեսն գաղափարականի մարդ էր: Գաղափարականի տէր մարդերը յուսահատ չեն ըլլար: Պօղոս Բրիստոսի Աւետարանը քարոզեց վիրաւոր վիճակին մէջ: Աչազուրկ Հոմերոս վեհ բանաստեղծութիւններ երգեց: Կալիլէոս իր խուզարկութիւնները շարունակեց զընգանի մէջ: Բէփլըր պարտքի համար բանտը դրուած էր, ուր՝ սակայն՝ դիտութեան օրէնքները կը գրէր: Տանդէ իր արքայուհեցաւին մէջ մէկ բարձր Խտալիոյ ջատագով էր: Միլտոն զրախտը կ'երգէր՝ մինչ տեսանելի աշխարհը իրեն անտեսանելի էր: Պայրըն գեղեցիկ Աթէնքի վրայ գրեց երբ Փիլիքական տկարութեամբ կը տառապէր: Բազըթ Հոլ զօրաւոր քարոզներ կուտար մինչ սաստիկ յօդացաւէ կը չարչարուէր: Աչազուրկ Ֆասէթ Անգլիոյ թղթատարական ընդհանուր տնօրէնն էր: Ծան Պընելըն Բրիստիանոսի ճամբորդութիւնը գրեց Պէրֆորթ բերդին մէջ բանտարկութեան ատեն: Պիթօվէն խուլ վիճակին մէջ վարմանալի երգեր երգեց: Ուրիմն դո՛ւն ալ գաղափարական մ'ունեցիր, այն ատեն կրնաս քու

միջազայնէ գիր բարձրանալ:

Մեր Աւետարանին մեծ գէժքերէն մէկը սահմանադրութիւն մը գծեց: Մտիկըրէ թէ ինչ կ'ըսէ ան. «Ինչ որ ճշմարտութիւնով է, ինչ որ պարկեշտութիւնով, ինչ որ արդարութիւնով, ինչ որ մաքրութիւնով, ինչ որ սիրով, ինչ որ բարի համաւածով, ինչ առաքելութիւն է ինչ գովութիւն որ կայ, այն բաները խորհեցէք» փրկւ. 4. 8: Ինչ զարմանալի գիւտ մըն է այս: Յարաբերութիւններու մէջ արդար, մաքուր եւ պարկեշտ եղիր, խորհէ՛ ինչ որ բարի համաւած է, ինչ որ մաքուր հոգին կը գրաւէ եւ ոչ միայն ինչ որ գեղեցիկ է: Ահա այս է կեանքը մեր Ս. Գրքին Քրիստոսին:

Աւետարանի մեծագոյն պատգամին նայէ. (Գործք. 17): Պօղոս Աթէնքի մէջ է: Աթէնք փառք քաղաք մըն է, որ դաւայն աշխարհի ուսուցիչը, արեւեստի եւ փիլիսոփայութեան մայրաքաղաքն է: Պղատոնի Ակադեմիան հոն էր, Սոկրատ հոն ծնաւ ու հոն մեռաւ: Արիստոտել Աթէնքի մէջ սորվեցաւ: Պօղոս հոն քաջովեց: Քարոզին նիւթն էր Աստուած ձեռագործ տաճարներու մէջ չի բնակիր: Պօղոսի ժամանակը երկու տեսակ փիլիսոփայութիւններ կային: Եպիկուրեան փիլիսոփայութիւնը կ'ընդունէր թէ Աստուած մը կայ, բայց մեղմէ շատ հեռու է, եւ ո՛չ զոհ կը պահանջէ, ո՛չ ալ աղօթք կը լսէ: Պփն ջանա՛ կեանքի հաճոյքը վայելել, բայց ճիշդ ասոր համար քու փափաքներդ չափաւորէ: Երկրորդն է Ստոյիկեան փի-

լիսոփայութիւնը, որ Աստուծոյ մը գոյութիւնը չ'ընդունիր, բայց կը սորվեցնէ թէ միտքն է որ աշխարհը կը վարէ, եւ թէ նախախնամութիւն կայ, եւ մարդ պէտք է իր ճակատագիրը յօժարակամ ընդունի, պէտք չէ գէպերէն ազդուի եւ պէտք չէ ուէ բանի համար հոգ ընէ:

Պօղոս այս մարդոց կ'ըսէ. «Կըսխալիք, Աստուած կայ եւ գերեզմանէ անդին կ'հանք կայ: Նայեցէ՛ք, Քրիստոս յարութիւն առաւ: Ուրեմն 1) մենք կարող ենք զԱստուած գիտնալ. գուք կը փնտռէք ճշմարիտ Աստուածը: 2) Աստուած կը տեսնուի արարչագործութեան մէջ: 3) Աստուած կը ճանչցուի անձնական փորձառութեան մէջ. Անոր սէրն ու ներկայութիւնը ամէն մարդ կ'զգայ, Անով կանք ու կը շարժինք: 4) Աստուած գոյ է բանին մէջ: Եզրակացնելով կ'ըսէ: 1) Մէկ Աստուած կայ, աշխարհի եւ անոր մէջ գոյ եղող բոլոր բաներու արարիչը Աստուած մըն է, եւ ոչ՝ աստուածներ: Ես կը հաւատամ ամենակարող, երկինքն ու երկիրը ստեղծող Հօր Աստուծոյ: 2) Կեանքի ազրիւնն է Աստուած. «Աստուած է որ ամէնուն շնորհած է կեանք, շունչ եւ ամէն բան»: 3) Աստուած զրկեց Քրիստոսը, «Իր սահմանած մէկ մարդը» Այս մարդը եկաւ, մեռաւ, թաղուեցաւ եւ յարեաւ: Քրիստոս պիտի գատէ ամէն մարդ:

Ահա՛ մեր Ս. Գրքին զերագոյն պատգամը:

Ձահկէ

ԹԿԲ. ՇՆՈՐՀՕՐԵԱՆ

ՃՈՐՃ ՄԷԹԻՍՏՆԻ ԱՆՄՈՂ ԵՐԳԸ

Փթ. դարու ամենաարդիւնաւոր աւետարանիչներէն մէկը եղած է Ժորժ Մէթիսըն: Իր այդ ազդեցութեամբ գործունէութիւնը ա՛լ պատմութեան ան-

ցած է, բայց իր մէկ երգին վանկերը տակաւին կը թրթռան աշխարհիս ամէն կողմը. եւ անիկայ պիտի շարունակէ արձագանգել քանի մարդկութիւն մը

կ'ապրի երկրիս վրայ :

Մէթիսըն ծնած է Սկովտիոյ Կլասկօ քաղաքը 1842 Մարտ 27ին : Հայրը վաճառական էր և կրօնական ըմբռնումներուն մէջ՝ աւանդապաշտ : Մօրը մասին Մէթիսըն կ'ըսէ . «Մայրս հետապնտող միտք մ'ունէր , և անկասկած խոկացողի ոգիիս մէկ մեծ մասը մօրմէս ժառանգած եմ : Ութը զաւակներուն երկրորդն էր ան , առաջինը ըլլալով քոյր մը ու մինչև վերջը իրմէ անբաժանելի մնաց :

Մէթիսըն հազիւ 18 տօնու էր երբ մայրը տեսաւ որ իր տեսողութիւնը աւրուած էր : Կամաց կամաց տեսողութեան ակարութիւնը աւելցաւ , ուսանողութեան շրջանին զօրաւոր ակնոցներ և խոշոր տառերով գիրք կը զօրծածէր : Բայց 18 տարեքին զրեթէ կուրցաւ : Մինչև վերջը ասնպիսի պահեր կ'ըլլային երբ կրնար մութ կերպով նշմարել իրերը առանց զանոնք զանազանել կարենալու :

Կ'ըսուի թէ տեսողութենէ զրկուած Մէթիսընը շինած է միտքի թարգմանը Քրիստոսի և հոգեւոր կեանքի ինչպէս որ կը տեսնուի իր երեք գիրքերուն* մէջ : Բայց տակաւին 7 տարեկան եղած ատեն սկսած էր ընտանիքի անդամներուն քարոզել ասնպիսի զարմանալի կարողութեամբ մը որ մանուկի մը համար անհաւանական էր :

Մէթիսըն կանուխէն միտում մը ցուցաւ քնարերգական քերթուածներ գրելու : Հրատարակեց «Մըրազան Երգեր» ու հատոր մը , որուն մէկ մասը գրուած էր մանկութեան շրջանին : Մէթիսընի երգերը ենթակայական են , այսինքն ուղղակի իր փորձառութեան և ներքին հոգեւոր ապրումներուն թարգմանն

են : Այս հատորը սակայն չի պարտւում կեր իր մեծագոյն երգը որուն թարգմանութիւնը կուտանք հետ . —

Ո'վ սէր որ չես լրեր զիս բնաւ,
Յոգնած հոգոյս հանգիստն ես դուն,
Կեանքս քեզ ևս կուտան կտան,
Որ մեզ խորհիդ անհունն, անքաւ,
Ըղջայ ճոխ, յորդուն :

Ո'վ յոյս, ուղղիջ ճանքուս մոյս,
Կանքեղն առկայձ կուտան Քեզի,
Սիրս ևս կուտայ շողն իր շրկար,
Որ ան յոյսիդ մեզ Գու պայծառ,
Յըստակ ու ջիւղ փայլի :

Ո'վ խիղի որ ինձ կուտաս խախոյս,
Քեզի ընդ միջս իմ սիրս և քաջ,
Աղեղն անպէս կուտայ ինձ յոյս,
Թե այգն, երբ մութ ստուերք տուն խոյս,
Պիտի ըղջայ անլաց :

Ո'վ խաչ, բարձն իմ յոգնած զըլիսն,
Քեզի չ'ուզեր փախչիլ իմ անձ.
Մեռած փառքերս կուտան հողին,
Որ իր կարմիր ծոցին կրկին
Մըլի նոր կեանք մ'անանց :
(Թարգմ. Փրոֆ. Ն. Պաշտօնեանի)

Մէթիսըն սակայն կը նկարագրէ թէ ինչպիսի պարագաներու տակ զայն գրի առած է . «Երգս գրի առի ինչէլանի երիցատունը 1882 , Յունիս 6 ի իրիկունը : Այն ատեն տաճարին էի : Բրոջս ամուսնութեան օրն էր , և ընտանիքի մնացեալ անդամները Կլասկոյի մէջ պիտի գիւղերէին : Ինծի բան մը պատահած էր , որ միայն ինծի ծանօթ էր , բայց որ հոգեկան ամէնէն սաստիկ տառապանք պատճառած էր ինծի : Երգը այդ տառապանքին արգիւնքն էր : Այս կտորը բոլոր կեանքիս մէջ ամէնէն արագ արտադրուած երգն է : Այն տպաւորութիւնը ունեցայ որ ներքին ձայն մը ինծի տուն կուտար քան թէ ես զայն կ'երկնէի :

*Studies in the Portrait of Christ, St. John's Portrait of Christ, The Spiritual Development of St. Paul.

Ես անկասկած եմ որ բոլոր գործը հինգ վայրկեանէն աւարտեցի, և հաւասարապէս զատահեմ որ երբեք զայն չսրբագրեցի:»

Հոգեկան մեծ տառապանք պատճառող այս պարագան շատերուն ըսածին համեմատ Մէթիսընի լքուին էր իր նշանածին կողմէ, որ ըսած էր թէ չի փափաքիր կոյր քարոզիչի մը հետ ամուսնանալ: Ուրիշներ չեն համաձայնիր այս կարծիքին. այս գրուագը ընդհանրապէս Մէթընի ուսանողական կեանքին կը կցեն. բայց Մէթընը ինքը կ'ըսէ թէ 40 տարեկան էր երգը գրած տօնն: Այս երգին տուն տուող պարագան ինչ որ ալ եղած ըլլայ անիկայ օրհնութիւն մը եղած է, միայն թարեւոյ շատ վշտակոծ արտերը, արցունքներու մէջ դարձի բերելով շատերը: Այս պարագան բացատրող շատ մը գէպքերէն մէկը կ'արժէ յիշել հոս:

Կալկաթայի Ուէլսի հրապարակին վրայ Միացեալ Ազատ Եկեղեցիին մէջ պաշտամունք կը կատարուէր, որ գրեթէ պաղ տպաւորութեամբ մը կը վերջանար երբ քարոզիչը առաջարկեց «Ով սէր, որ չես լքիր զիս բնաւ» երգը երգել: Երգահանար տիկինը անդի տուաւ այցելուէի մը որ սկսաւ նուագել: Բայց հազիւ հաղ մատերը ստեղնաշարին դը-

պած էին փոքրամերկեան երգահանը գի առաւ: Բոլոր ներկաներուն դէմքերը սկսան փայլիլ: Վարպետ մըն էր նուագողը: Բոլոր ժողովուրդը ստքի կայնեցաւ և երգեց: «Եթէ սերովքէ մը եկած ըլլար Սիոնի երգով մը զիս արթնցնելու՝ զարմանքը ասկէ աւելի մեծ պիտի չըլլար:» Կ'ըսէ ունկնդիր մը, որ կը շարունակէ. «Երգահանը զարնողը երբորդ երկինքը բարձրացած կը թուէր, անիկա երգեց և նուագեց և մեզ քչեց անդիմադրելի ոյժով մը: Յանկարծ հիւպատոսի կինը ծուկեկեղուն վրայ ինկաւ, յուզուեցաւ և ցնցուեցաւ, երեսը ձեռքովը ծածկեց, մինչ վեհօրէն գեղեցիկ եղանակը կը շարունակէր մեզ տանիլ: Հիւպատոս ինչընելիքը չէր գիտեր, բոլոր աչքերը իր կնոջ դարձած էին: Բնածին հանդարտութեամբ և զօրաւոր կարեկցութեամբ իր կնոջ քովը գլուխը ծռած աղօթեց: Տեսարանը գեղեցիկ էր, գրտնուած տեղս շատերուն թարթիչներուն վրայ արցունքներ կը փայլէին: Բայց երգահանի վրայ նուագողը ի՞նչ վիճակի մէջ էր. ան յափշտակուած էր: Անոր ակօսուած գէմքէն վար արտօսներ կը գլորուէին: Իր գլխուն խոպոպները տեսարանը աւելի տպաւորիչ կ'ընէին: Ան երգահանի վրայ ծռելով իր հոգին էր որ կը թափէր: Երգեցողին վիշտը կը հաւասարէր Մէթիսընի վիշտին:»

ՀՈԳԻՒՍ ՎԵՐԵԼՔԸ

Կ'անցնինք քաղքին եղտիւրէն՝ ուր գորտերը կը կոկոսան.
կը սուրանք վեր պայքարէն կեանքի աղառա ու դաժան.
Փռնեթաթաւ տապահեղձ ճամբաներէն վեր ի վայր
Միշտ կը սուրայ գէպի վեր մեր թեթեւ կառքն ինքնավար:

Կը բարձրանանք շարունակ Բէտուլլայի լեռն ի վեր
Կ'եղերենք ծոր ու հովիտ՝ ւանտառներ նստաւորուեր,
Հորիզոններ կը բացուին թովակապայտ երկինքով
Վեհութիւն մը կը տիրէ ահաւոր այլ հոգեթով:

Նոր տեսիլքներ հոգեզմայլ ճշմարտին ա զ հոգեցկին
 Կը խառնուին հպանցմամբ՝ զիտակցութեանս հասանքին .
 Գծծութիւններ փոքրոգի, ատելավառ խօս կիրքեր,
 Տեղի կ'ուտան հոգեկան բարձունքներու օրհնաբեր :

Կը բարձրանամ ցեխամոյն կեանքի ճահճէն զարշահատ
 Ուր գորտերը կը վխտան ստոր Եսին հրայրքոտ .
 Հասնիմ տենչամ մեծութեան նկարագրին Անոր որ
 Պատրաստ է սուրբ սիրտ տալու Նոր Յոյս հաւատք մը՝ հպօր :

Այժմ պատուել կը բաղձամ սա վանդակը հոգեղէն
 Ու ճախրանքով մը զլեւ անցնիլ նիւթի սահմանէն
 Ղէպի անտեսանելի Նոր աշխարհներ նուիրման
 Մառայութեան ու սիրոյ բնագաւառներն անսահման :

Իվե՛ր իվե՛ր անդադար ոլորտները Նոր կեանքի,
 Իվե՛ր իվե՛ր անդադար բարձունքները Նոր փառքի .
 Հորա բարձունքներն Նորանոր կը բանայ Նոր հորիզոն
 Հոգի՛ս, թափ տո՛ւր թեւերուդ, թռի՛ր թռի՛ր զէպի հոն :

Կեանքը վերելք մէ՛՛ հոգի՛ս իվեր իվեր անդադար
 Դէպի բարձունքն սրբութեան մինչեւ հասնիս զու կատար .
 Հո՛ն պիտ' գտնես վայելքներ երանութիւն մ'աննըման
 Ներկայութիւնն Մեծ Սիրո՛յ պիտ' պատէ ձեզ յաւիտեան :

Իվե՛ր իվե՛ր հոգեկան բարձունքները մեծութեան :
 Հայկպ Հ. ՅԱԿՈԲԵԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՊԱՆԻՈՅ ՄԷՋ ԱԻՅՏԱՐԱՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Դարուս հրաշքներէն մէկն է դարերէ
 իվեր շղթայակապ կաթուղիկ Սպանիոյ
 մէջ յառաջ եկած կրօնական և քաղա-
 քական յեղափոխութիւնը : Եթէ մէկը
 կարենայ ուսումնասիրել այս ընդար-
 ձակ երկրին պատմութիւնը քաղաքա-
 կան, ազգային և կրօնական մարզերու
 մէջ՝ միջին դարերէն սկսեալ մինչեւ
 ներկայ յեղափոխութիւնը, և ապա
 զայն բաղդատել ներկայ շարժումներուն
 հետ ինչ մեծ տարբերութիւն պիտի
 գտնէ անոնց միջեւ : Բնակահարար
 մեղի ամէնէն աւելի զարմանք կը պատ-
 ճառէ եկեղեցական և անհատական
 կեանքի մէջ անոր ներկայ տազնապը :

Ինչ զարմանալի է, որ նախկին իշ-
 խող կաթուղիկ եկեղեցին այսօր դառա-
 պարտուի, և առաջ հալածուող բողո-
 քականութիւնը այսօր փառաբանուի :
 Տարիներ առաջ «Ո՛վ Տէր, մինչեւ
 ե՛րբ...» ըսելով ինկած նահատակներու
 սրտաճմլիկ աղաղակները՝ և երկինքը
 սարսղաղօթքներն էին որ այսօր առ-
 զարմանալի փոփոխութիւնը յառաջ բե-
 րած են :

Ընթերցողներու ամփոփաբար կը
 ներկայայնեմ «Րէքլըր» ալ Բրիտըն
 Ուլըք» թերթին վերջին մէկ թիւին
 մէջ տեսնուած «Սպանիա Աւետարանին
 Առջեւ Բաց է» յօդուածը, աւելի լաւ

հասկացնելու համար Սպանիոյ մէջ յառաջ եկած այս զարմանալի կրօնական փոփոխութիւնը և աւետարանական ազատութիւնը:

«Հանրապետութիւնը նոր կեանք մը բերած է Սպանիոյ: Կանխամտածութեամբ հրդեհուած վանքերու մայրապետները մինչ փոշոցներու մէջ մնացած էին, Բողոքականները անոնց հանդէպ բարեկամական ոգի ցոյց տուած են զանոնք իրենց տունը ընդունելով և պաշտպանելով: «Պրիթիշ Ուիլի» թերթին մէջ Ալեքսանտր Սթիւըրթ կ'ըսէ թէ, Թիսուսեան կրօնաւոր մը որ Մատրիտի կաթոլիկ եկեղեցիներուն, վանքերուն և Դոլէճներուն աւերակները ցուցնելով մեզի ծանօթութիւն կուտար, վախէն աշխարհականի հազուստ հաղած էր»:

Արդեկիրաս քաղաքին մէջ ամբոյսը եկեղեցիները խուժեց և անոնց մէջ պանուող քարէ և փայտէ պատկերները դուրս հանելով փոշոցներու մէջ քաշկըռեց, բայց Բողոքական աղօթաւայրերուն երբեք չդպաւ:

Մատրիտի մէջ ամբոյսը Կաթոլիկ հաստատութիւնները կործանելու երթալու ատեն մինչ Բողոքական Աստուածաբանական Ճեմարանի քովէն կ'անցնէր միաձայն պոռաց. «Կեցցի՛ն Բողոքականները»:

Ուրիշ մէկ թղթակցին ըսածին համեմատ Սպանիոյ աւետարանականները Աստուծոյ փառք կուտան իրենց աղօթք-

ներուն պատասխանած ըլլալուն համար:

Վալտէֆէնայ քաղաքը, հանրապետական վարչաձեւի հռչակուած գիշերը, խրախճանքի մէջ եղող ժողովուրդը երբ Ս. Գրքի ուսանողները կը տեսնէ «Կեցցի՛ն Բողոքականները» կը պոռայ, և մարդիկ անոնցմէ կը խնդրեն որ անպատճառ իրենց խօսին: Ալքալար քաղաքին մէջ ալ վերջին մի քանի ամիսներուն միջոցին 12 մարդիւր ապաշխարած են:

Իւպետա քաղաքին մէջ արդիւնուած էր հոգևոր թերթիկներ ցրուել. իսկ հիմա հոն, թէ՛ ազատօրէն կը բաշխուին և թէ՛ հոգևոր պաշտամունք կը կատարուի քաղաքին հրապարակին վրայ: Քաղաքապետը որ Բողոքականները հաւածած և Աւետարանական քոջ մը դէմ սպառնացած էր, հիմա փոշոցին մէջ վերջինին հանդիպելով անոր բարեւորած էր: Սորիհիւէլա և Շիքլանա քաղաքներուն մէջ ալ Աւետարանը համարձակօրէն կը քարոզուի մեծ բազմութիւններու»:

Բողոքականութեան ծաւալման համար չ'աղօթինք, այլ փափաքինք և Աստուծոյ խնդրենք որ Աստուծոյ Թագաւորութիւնը ամէն ցիղի և ամէն սըրտի մէջ հաստատուի: Դուն և ես ա՛յս նկու պարտական ենք:

Պէյրուք

ԵՆՈՎՔ ԿԵՕՔԿԵՕԶԵԱՆ

ՍԹԵՐԼԻՆԻ ԱՆԿՈՒՄԸ

Վերջերս առեւտրական աշխարհի ամենակարեւոր գէպքը սթէրլինի անկումն է: Անգլիական ոսկին ալ, որ ծրարալթարի ժայռին չափ ամուր կը նկատուէր, անկում մը ունեցաւ և կը շարունակէ ունենալ: Հրապարակի վրայ անոր վերջին արժէքը տակաւին չէ

կայունացած. մինչև հիմա իր տրժէքին քսան առ հարիւրը կորսնցուցած է, և չենք կրնար ըսել թէ ասկէ աւելին կորսնցնելու հաւանականութիւնը չկայ:

Այս անկումը իրարմէ տարբեր չափ պատճառներ ունի: Վերջին տարիներս Բրիտանական կառավարութեան

եղևմուտքին անհաւասարակչուութիւնը և անոր բացին աւելնալը, տարեկան 100—120 միլիոն ռուբլի չափ անգործ բանուորներու տրուած նպաստը, վերջին ընդհանուր տնտեսական տապալակ պատճառով Անգլիոյ արաւաքին վաճառականութեան նուազիւր, տուրքերու խիստ ծանրութիւնը, Գերմանիոյ և Հունգարիոյ նման կարգ մը երկիրներու պէտք եղածէն աւելի զրամ տրուելը, Անգլիական դրամատուններու մէջ ի պահ դրուած մեծաքանակ օտար գումարներու քաջութիւնը, Անգլիոյ պետական զրամատունը և ուրիշ գրամատուներու մէջ պահուած ռուբլի դրամներու պակսիւրը, և թերեւս կարգ մը արտաքին քաղաքական պատճառներ այս անկումը յառաջ բերած են։ Ասիկայ յանկարծ յառաջ չեկաւ։ Մի քանի ամիսներէ ի վեր չարագուշակ նշաններ մատուցող անկումը կը յայտնէին։ Այս աղէտը կանխարգիլելու համար թէպէտ ներսէն և դուրսէն կարգ մը միջոցներու զինուոր, բայց կարելի չեղաւ եղևմատական ապահովութիւնը կատարելապէս վերադարձնել, և սթէրլինը ինկաւ։

Սթէրլինի (թղթադրամ) անկումին ազդեցութիւնը հրապարակի վրայ մեծ եղաւ։ Ոչ միայն 450 միլիոն հոգիներ պարունակող Բրիտանական կայսրութեան առեւտուրը, այլ միջազգային վաճառականութեան մեծ մասը սթէրլինի վրայ կը կատարուէր իբր ամէնէն վստահելի և ամէնէն կայուն զրամ ընդունելով գոյն։ Ֆրանսայի և Իտալիոյ նման մեծ պետութեանց արտաքին առեւտուրին կարեւոր մէկ մասը սթէրլինի վրայ կը կատարուէր։ Հետեւաբար այս անկումը բոլոր միջազգային առեւտուրը հիմէն կը սարսէ։ Սթէրլինի արժէքին անորոշութեան պատճառաւ բոլոր առեւտրական հրապարակի վրայ, մանաւանդ այս աշխան եղանակին, անշարժութիւն կը տիրէ։ Անգ-

լիական կառավարութիւնը կարգ մը կանխազգուշական միջոցներու զինուոր, որոնցմէ են ռուբլին արտասահման երթալը արգիլել, ռուբլիւմը իբր չափանիշ ընդունող կանոնը (gold legal tender) առժամապէս չեղեալ նկատել։ Այս վերջինը կը նշանակէ թէ այսօր Անգլիան ալ Ֆրանսայի, Իտալիոյ, Գերմանիոյ, Ռուսիոյ և ուրիշներու նման թղթադրամ կը պարձածէ։ Առաջ ձեռքը մէկ սթէրլին թղթադրամ ունեցող մը եթէ Անգլիոյ պետական զրամատունը զիմէր, անմիջապէս թղթադրամին տեղ կրնար անգլիական ռուբլի մատնել, բայց հիմա ալ այդպէս չի կրնար ընել։ Ձի կրնար ուէ մէկը ըսել թէ այս առժամակայ ըսուած կարգադրութիւնը որչափ պիտի տեւէ։

Սա ալ պէտք է յիշենք թէ թէպէտ երբեք փափաքելի բան մը չէ պետութեան մը գրամին անկումը, և սակայն ասիկայ անպատճառ այդ պետութեան գրամական ակարութիւնը չի մատնանշել։ Անգլիան տակաւին այսօր աշխարհի երեքէն հարուստ պետութիւններէն մէկն է։ Այսօր Իտալական լիբրէթի արժէքը իր նախապատերազմեան արժէքին երեք ու կէսէն մէկին կը հաւասարի։ Իսկ Ֆրանսական ֆրանքը իր նախկին արժէքին մէկ հինգերորդին կը հաւասարի, այսու հանդերձ Ֆրանսաներկայիս աշխարհի գրամապէս ամէնէն զօրաւոր երեք պետութիւններէն մէկն է։ 1925—26 ին ֆրանքն ալ այսօրուան սթէրլինի պէս թէպէտ տապալակ մը ունեցաւ, բայց Ֆրանսայի զրամական ոյժը երբեք չփաստուեցաւ, թերեւս ընդհակառակը աւելի զօրացաւ։

Սթէրլինի անկումովը պիտի շահին անոնք որ սթէրլինի վրայ պարտքերունին, և պիտի փնասեն անոնք որ ըսթէրլինի վրայ առնելիք ունին, կամ պատրաստ սթէրլին թղթադրամ ունին։ Անգլիական կառավարութիւնն ալ ան-

ուղղակի կերպով կրնայ այս անկումէն չափով մը օգտուիլ: Այն պարտքերը՝ որոնք առանց ոսկին պայման դնելու սթերլինով պիտի վճարուին՝ իրենց արժէքէն պիտի կորսնցնեն: Պաշտօնեաներու թոշակներուն, անգործներու յատկացումն նպաստին, ամէն տեսակ պետական ծախքերուն իրական արժէքը համեմատաբար կը պակսի: Գործաւորներու վարձքը՝ երեւութապէս նայել մնալով՝ իրականին մէջ կը նուազի, ապրուստն ալ անոր համեմատ կը աժաննայ, ամէն տեսակ առարկաներու և ապրանքի գինն ալ չափով մը կ'աժաննայ և այս կերպով թերեւս Անգլիոյ արտաքին վաճառականութիւնը կը աւելնայ և անոր հետեւանքը ըլլալով անգործներու թիւը կը պակսի և անոնց

տրուած նպաստը կը նուազի: Եթէ կրնանք Ֆրանսայի վերջին հինգ վեց տարիներու փորձառութիւնը Անգլիոյ համար կարելի նկատել, Անգլիան ալ սթերլինի այս անկումէն կրնայ ինչինչ օգուտներ քաղել: Նայնիսկ ըսողներ կան թէ այս կերպով Անգլիան թերեւս պիտի կրնայ իր ելեւմուտքին բացը գոցել: Չենք գիտեր. բայց սաշտիւր յայտնի է որ սթերլինի անկումը այնպիսի դէպք մըն է որուն ազդեցութիւնը մեծապէս զգալի պիտի ըլլայ ոչ միայն անգլիական պետութեան այլ բոլոր աշխարհի գրամական, տնտեսական և թերեւս քաղաքական կեանքին վրայ: Տեսնե՛նք թէ ժամանակը ի՞նչ պիտի ցուցնէ:

Զ. ՊԵՋՃԵԱՆ

ՍԱԼԱՌՆԱԿԻ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍԸ

Սաւառնակի ճարտարարուեստը մեծ յառաջդիմութիւն ցոյց տուած է շինուող սաւառնակներու տեսակները, մեծութիւնը, արագութիւնը, ապահովութիւնը աւելցնելու մէջ: Բայց իբր տնտեսական չափերը ձեռնարկ այսօր տաքնապալից շրջանի մէջէն կ'անցնի: 1926 էն մինչեւ 1929, խորհելով որ մեծ թիւով սաւառնորդներու ստիպողական պէտքին առջև պիտի գլտնուին՝ սաւառնորդութեան շատ մը նոր դպրօցներ բացուեցան ուր շուտով խուժեցին մեծ թիւով երիտասարդներ: Ասոր բնական արդիւնքը ըլլալով արտաւտականութեն պէտք մը ստեղծուեցաւ նոր սաւառնակներու շինութեան համար: Բայց շատ չանցած մարդիկ տեսան որ պէտք եղածէն շատ աւելի դպրօցներ հաստատուած, սաւառնակի վարիչներ պատրաստուած և սաւառնակներ արտադրուած են: 1926ին Միացեալ Նահանգաց մէջ սաւառնակի

ճարտարարուեստը տնտեսական նպատակի համար հազիւ չորս միլիոն տոլարի արժէքով արտադրութիւն մ'ունեցած էր՝ զոհացուցիչ չափ մը ապահովելով արտադրողներուն: 1930ի միջոցին սաւառնակի արտադրութիւնը թէպէտ կը հաւասարէր 20 միլիոն տոլարի, բայց ութը միլիոն փնտ պատճառած էր: Այս պարագան ճիշդ է նաեւ Բրիտանիոյ համար:

Ասոր պատճառները կրնան ըլլալ ընկերութիւններու մէջ մրցումը, համաշխարհային տնտեսական տաքնապը եւայլն: «Բայց» կ'ըսէ փորձագէտ մը, «հանրութիւնը արդէն չէր սկսած մեծաքանակ սաւառնակներ գնելու:» այսինքն, իրական պէտք մը յառաջ չէր եկած այդպի շատ թիւով սաւառնակներ գնելու: Ահա այս կը կազմէ սաւառնակի ճարտարարուեստին ներկայ տագնապին գլխաւոր և իրական պատճառը: Սաւառնակի մեծաքանակ արտադրու-

ԱՆԳԼԻՈՅ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԹՈՇԱԿԸ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱԳԸ

Պատերազմէ առաջ Ռուսիոյ Ձարը տարեկան 500 միլիոն ոսկի ֆրանք կը ստանար իր հասոյթներէն, Գերման կայսրը՝ աւելի քան 20 միլիոն, Իտալիոյ և Սպանիոյ թագաւորները՝ աւելի քան 15 աւան միլիոն:

1910 ին ձորճ թագաւոր գահին բոլոր ժառանգական հասոյթները փարլամէնթի տրամադրութեան տակ դրաւ առանց ուէ պայմանի, նոյն տարին փարլամէնթը որոշեց տարեկան 470 000 աւելիական ոսկի թոշակ տալ արքայական պալատին ծախքերուն համար: Այս գումարին 110,000 ոսկին արքայական անձնական ծախքին, 125000 արքայական տան պաշտօնէութեան թոշակներուն, 193,000 ը պալատի ընթացիկ ծախքերուն, 20,000 ը պալատի նորոգութեան, 13,000 ը արքայական նպաստի և ժառանգոր սպասարկութեան, 9000 ը գործածելի պատահական ծախքերու համար:

Ասկէ դատ թագաւորական գերդաստանին միւս անդամներուն կը արտի 106,000 ոսկի: Թագուհին երբ այրիանայ պիտի ստանայ տարեկան 110,000 ոսկի: Լանքասթրի դքսութեան հասոյթները, որ 1929 ին 62,000 ոսկի կը հաւասարէր, կը պատկանի ձորճ թագաւորին:

Անգլիոյ վեհապետները գիտեն իրենց ժողովուրդին սիրտը և կարեկցու-

թիւնը շահիլ: Պատերազմի միջոցին ձորճ թագաւոր պետական գանձին 100,000 ոսկի նուիրեց: Իր ամուսնութեան 25 ամեակին առթիւ 53,000 ոսկի նուիրեց ծովային և ցամաքային խեղանդամներու: Իսկ Անգլիոյ վերջին տնտեսական տագնապին առթիւ 50,000 աւելիական ոսկի նուիրեց պետական գանձին: Ասոր համար է որ «Ժողովուրդին բարեկամը և հայրը» ճանչցուած է ան:

ԱՇԽԱՐՀԻՍ ՎՐԱՅ ՈՍԿԻԻ ՔԱՆԱԿԸ

Միացեալ Նահանգաց մէջ Սեպ. 9ին ոսկիի քանակը հասած է 5000 միլիոն տոլարի. վերջին երեք ամսուան միջոցին 197 միլիոն տոլար աւելցած է: Ֆըրանսայի մէջ Սեպ. 8ին պահեստի ոսկիի քանակը բարձրացած է 2295 միլիոն տոլարի (58575 միլիոն ֆրանք). այսինքն վերջին երեք ամսուան միջոցին 82 միլիոն տոլար (2050 միլիոն ֆրանք) աւելցած է: Այս ամսուան սկիզբը Միացեալ Նահանգներէն Ջուլիցերիա, Հոլանտա և Ֆըրանսա մեծաքանակ ոսկի ղրկուած է. ֆրանսա ղրկուած ոսկիին արժէքն է 7 միլիոն տոլար: Բոլոր աշխարհի ոսկիի քանակն է 1200 միլիոն տոլար:

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Թիւնը և սպառումը կախում ունի, այս փորձագէտին կարծիքէն համեմատ, զայն ճարտարարուեստներու մէջ գործածողներէ և սաւառնակի սեպհականատէր անհատներէ: Այս երկու տեսակ գնողներու թիւը կ'աւելնայ եթէ օդային սպասարկութեանց գիւրթութիւններ, իջնելու յարմար տեղեր և օդի կայաններ ածան գիներով կարելի ըլլան:

Աշխարհի վրայ առաջին անգամ ըլլալով Տր. Ուիլեմ Կէյթս կրցաւ կեդրոնական Ամերիկայի Մայացեղին խորհրդաւոր մեհենագրութիւնները կարգաւ: Այս մեհենական գրութիւնները այլապէս պատկերներու ձեւով փորագրուած են, որոնք շատ քիչ կը նմանին Եգիպտականին: Թարգմանութեան մէկ մասը Տրէգտընի ձեռագիր կոչուած Մայաց

դրքէ մը հղած է, որ Մի քանի տարի առաջ Եւրոպայի մէջ գտնուեցաւ: Գիտնականը ծանօթ երեք Մայա գիրքերուն մէջ գտաւ 2500 որոշ փորձած գիրեր և 100 հատ ալ փոքր գիրեր:

Ուայոմինկի մէջ կենդանիներու բըրձածոյ կամիսքի կտորներու 1076 նըմոյշները գտնուեցան, որոնք գիտնականներու կարծիքին համեմատ լոյս պիտի սփռեն 50,000,000 տարի առաջ ապրող կենդանիներու վրայ: Առնչմէ շատերը ստնտու կենդանեաց դասակարգին կը պատկանին:

Գիտնական մը կ'ապացուցանէ թէ՛ ձգախէժին աւրուելը թթուածին կոչուած կազին ազդեցութենէն յառաջ կուգայ, թթուածինը ձգախէժի վրայ ազդելով դայն կը կակուղցնէ: Եւ տեսնուեցաւ որ երբ ձգախէժը առանց թթուածինի հետ շփում ունենալու կը պատրաստուի՝ անթերի կ'ըլլայ:

Ջանազան հետազոտութիւններ կատարելէ վերջ Մըրթի Մէքիբո գիտնականը կը ցուցնէ թէ՛ հերմակ ցեղէ ծընողներու երեխաները աւելի շատ կը հասունանան և կը զարգանան քան խափշիկներունը:

Քիմիական կերակուր պատրաստելու ժամանակ փրօֆէսոր Վիլհէլմ կըրցաւ ածուխէն հաւկիթի ճերմկուց պատրաստել: Այս գիտունը կը հաւատայ թէ՛ աշխարհը այնչափ յառաջ գացած է որ կրնայ ածուխէն քիմիական կերակուր պատրաստել:

ՀԱՅ ԿԵԱՆՔ

ՎԵՀ. ՍԱՀԱԿ Բ. Խապահան, Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ, ամառը Կիպրոս անցընելէ հոքը Սարաճեան Սրբազանի հետ վերադարձած է Հալէպ: Հոկտ. 11 ի Կիրակի առտուան պաշտամունքէն

հոքը Վեր. Կարապետ Յարութիւնեան, Վեր. Կարապետ Քէթէնճեան, Տիար Տիգրան Խրլորեան, Վեհափառին բարեգալուստ մաղթելու գացին առաջնորդարանը: Մեծապէս ուրախալի էր վշտակոծ Կաթողիկոսը տեսնել տակաւին առոյգ եւ առողջ: Մեծ հաճոյք պատճառեց նաեւ Սարաճեան Սրբազանէն լսել Կիպրոսի Հայութեան խաղաղ կեանքին եւ Միլթոնեան կրթական հաստատութեան բարգաւաճ վիճակին մասին: Հաստատութեան մէջ 350 երկուսու ուսանողներ կը գտնուին:

ՀԱԼԷՊԻ Պոյգ Հայ Սփռչի Ամերիկացի տնօրէն Նախագահը, Տր. Ճ. Մէրիլ և ուրիշներ տիկնոջ նման վիրաբուժական գործողութեան ենթարկուած է. բայց ուրախ ենք որ ապաքինելով ա'լ սկսած է առնէն դուրս ելլել:

ՀԱԼԷՊԻ Գ. Հայ Աւետ. Ժող. եկեղեցին վարձած ըլլալով Նիկիայի տնօրէն Գարանի մեծ սրահը սկսած է իր կիրակնօրեայ և միջշաբթուայ հոգևոր հաւաքոյթները հոն ընել կանոնաւորապէս:

ՏՐ. Բ. ՈՒՍՅԱՆՏՐ Գործադիր քարտուղարն է Մերձաւոր Արեւելքի Քրիստոնէական Խորհուրդին, որ կը ներկայացնէ Մարտէն մինչև Աֆղանիստան և Պաքիստանի մինչև Արաբիա գործող աւետարանական ոյժերը: Այս ընդարձակ հողամասին վրայ կ'ապրին 135 միլիոն ժողովուրդ մը որուն 77 միլիոնը Իսլամ, 2 միլիոնը Հրեայ, 56 միլիոնը քրիստոնեայ են: 2000 բողոքական միսիոնարներ, Եւրոպայի և Ամերիկայի, կը գործեն այս ժողովուրդներուն մէջ: Խորհուրդն միջազգային և միջլարանտանական է, և երկու տարին անգամ մը կ'ունենայ իր ժողովները: Խորհուրդին ազդեցութեան ենթակայ երկիրները բաժնուած են միսիոնարական շրջաններու, ուր գործող միսիո-

նարական ոյժերը կը կազմեն շրջանա-
յին խորհուրդներ: Այս վերջիններն ալ
կ'ունենան իրենց տարեկան ժողովները:

Մ. Ա. ի Բրիստոնէական Խորհուր-
դին գրական յանձնարարութիւն կ'անդա-
մակցի Փրոֆ. Լ. Լեոնեան: Յանձ-
նարարութիւն գործն է Իսլամներու ծանո-
թացնել Բրիստոնէ աւ Անոր Աւետարա-
նը: Հրեաներու մէջ գործող աւետա-
րանչական մասնախումբ մ'ալ կայ:
Պարսկաստանի մէջ նախկին Իսլամ
Պարսկներէ, Հրեաներէ և Նեստորա-
կաններէ բաղկացեալ աւետարանական
եկեղեցիներ կան: Պարսկաստանի և
Եգիպտոսի մէջ կարեւոր թիւով և մա-
նաւանդ մտաւորական և ազգեցիկ դա-
սակարգէ Իսլամներ աւետարանակա-
նութեան յարած են, հակառակ եղած
հալածանքներու:

Տր. Ուսյուրը այս երկիրները միշտ
կը շրջի: Հոկտ. 8 ին իր Հալէպ ժա-
մանուսին առթիւ Մր. Էտքինգի տունը
Հալէպի բոլոր աւետարանական հովիւ-
ները տեսակցութիւն մ'ունեցան անոր
հետ, որ զօրաւոր քրիստոնէական կեան-
քի և արդիւնաւոր աւետարանչական
գործունէութեան գաղտնիքին մասին
իր պատգամը յայտնեց, ծանրանալով
«Քրիստոս ձեր մէջը» խօսքին վրայ, և
բացատրեց աղօթքի զօրութիւնը: Այս
անխոնջ աւետարանիչը Հոկտ. 10 ին
բաժնունեցաւ անուշ տպաւորութիւն
թողելով ամէնեւն վրայ:

ՈՒՐԱԽՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՏԵՂԵԿԱՆԱՆՔ
որ Միսիս Պ. Րիկսի, Վեր. Հ. Հ. Րիկ-
զի հանգուցեալ առաջին կնոջ անունով
պահուած հիմնադրամը, նուիրուած է
Պէյրութ քէմփի Հայ Աւետ. Եկեղեցիին,
եկեղեցական շէնքի մը կառուցման
համար:

ՄՐ. Հ. Հ. Րիկզ, քաւով կը տեղե-
կանանք որ, տեսնէ մ'իմեր հիւանդա-
ցած է: Ծուտափոյթ ապաքինում կը
մաղթենք:

ՔՈՔԻՆԻՈՅ (Պիերէոն) Հայ Աւետ. Ե-
կեղեցիի հովիւը Պատ. Գրիգոր Տէմիր-
ճիեան կը գրէ:—

Հակառակ այս ամառուան սառտիկ
տաքերուն, մենք Աստուծոյ սգնու-
թեամբ կարողացանք շարունակել մեր
եկեղեցւոյ առնջակից կրօնական և կր-
թական գործունէութիւնները:

Յուլիս 12ին տեղի ունեցաւ Քաթի-
նիոյ Հայ Աւետարանական եկեղեցւոյ
կիրականօրեայ վարժարանին ամսական
հանդէսը՝ ղեկավարութեամբ Պէյրութի
Ամերիկեան համալսարանէն շրջանա-
ւարտ, իսկ այժմ Սքուլ ալ Րիլիճընի
ուսանող Տիար Կարապետ Թիլքիեանի:
Սոյն հանդէսը, շնորհիւ իր յայտագրին
հոգեւոր բովանդակութեան, խիստ լաւ
տպաւորութիւն թողաց ներկաներուն
վրայ: Այս տարի ևս ունեցանք Քաթի-
նիոյ մէջ ամառնային վարժարան մը 330
աշակերտներով և 9 ուսուցիչներով՝ տը
նօրէնութեամբ Տիար Կ. Թիլքիեանի:
Այս առթիւ կ'ուզենք հրապարակաւ ար-
տայայտել մեր սրտաբաւ և անկեղծ
շնորհակալութիւնները Սքուլ ալ Րիլի-
ճընի պատուարժան ուսուցչական կազ-
մին ինչպէս նաև անոր ժրաջան ուսա-
նողներուն՝ այն անգին ծառայութեան
համար զոր այդ պատուական հաստա-
տութիւնը կ'ընձեռէ մեր կիրականօրեայ
վարժարաններուն և բեմերուն: Մենք
խորապէս համոզուած ենք որ սոյն հաս-
տատութեան կատարած դերը նախախ-
նամական եղած է մեր հայ իրականու-
թեան մէջ:

Մէկ տարուան արձակուրդէն յետոյ
քաղաքս վերադարձող Տոքթ. և Միսիս
Մարտին, ինչպէս նաև Աթէնքէն մեկ-
նելու վրայ եղող Մր. և Միսիս Կէչլըի ի
պատիւ բարեգալուստի և հրաժեշտի ըն-
դունելութիւն մը սարքեցին Աթէնքի
Հայ Աւետարանական Եկեղեցիները, օ-
գոստոս 5ին, Քաթինիոյ Հայ Աւետարա-
նական եկեղեցիին մէջ, ի ներկայու-

թեան հարիւրի մօտ Հայ և Ամերիկացի հիւրերու և նախագահութեամբ Վեր. Կ. Սթամպօլլուեանի: Հաւաքոյթի ընթացքին նախ խօսեցան փրոֆ. Լեւոն Լեւոնեան և Վեր. Սթամպօլլուեան, որոնք գնահատական խօսքեր ըրին մեր բարեկամներուն մատուցած ծառայութեան համար: Յետոյ խօսեցաւ Տոքթ. Մարտին, որը նախ մեր ամերիկահայ ազգակիցներուն ողջոյնները հաղորդեց եւ յետոյ թելադրեց մեր մշակներուն համբերատար ըլլալ հակառակ տիրող տնտեսական ծանր ազնապին: Ի վերջոյ Մր. Կէչըլ խօսք առնելով յայտնեց իր հայասիրութիւնը: Ներկաները պաշտօնադակով հիւրասիրուելէն ետքը գոհ ապաւորութեամբ մեկնեցան:

Տիար Յուլակ Տիւրքիսեան շարք մը խիստ շահեկան եւ գուարճալի դասախօսութիւններ ըրաւ Բոքինիոյ Ե. Բ. Ջանից Միութեան գրական ժողովներուն նիւթ առնենալով «Հայոց կեանքը փոքր Հայքի մէջ յիստէն տարի առաջ»: Սեպտ. 13 ին Սուրբ Խաչի տօնին առթիւ Բրիտանական նաւատորմի Վայո Բօյ զրահաւորի հրամանատարը, Լէֆթ. Գըմէնալը Լ. Թ. Մէթթըրս շատ պարզ եւ հոգեւոր քարոզ մը տուաւ մեր եկեղեցւոյ մէջ բնաբան ընտրելով «Խաչը»:

«ՀԱԼԷՊ ԳՈԼԷՃ» ի «հիմնադրներու Օրոշուան առթիւ Հոկ. 11, կիրակի իրիկուան ժամը Տին Էմմանուէլ եկեղեցիի վարը սրահը տեղի ունեցաւ հաւաքոյթ մը: Երգերէ և Վեր. Կ. Բէթէնճեանի աղօթքէն ետքը նախապատրաստական բաժնին Ա. դասարանը գոլէճի ուխտը ստորագրեց, որով կը խոստանար հաւատարիմ մնալ Գոլէճի և անոր ուսուցիչներուն: Ապա փոխ տնօրէն Մր. Ա. Բարըլթըն ուղերձ մ'ըրաւ Փրէշմէն կարգին բնաբան ընտրելով Ղուկ. 12. 48 համարը: «Ժողովուրդին միայն փոքր մէկ մասը,» ըսաւ ազնիւ փոխ տնօրէն

նը, «արտօնութիւնն ունի գոլէճական, ուսում առնելու: Գոլէճի մէջ երեք տեսակ ուսումներ կ'աւանդուին. 1) բնական գիտութիւններ, 2) առեւտրական դասեր (տնտեսագիտութիւն, տնտեսականութիւն, լեզու), 3) մարդուն մասին խօսող գիտութիւններ, (պատմութիւն, հոգեբանութիւն, գրականութիւն): Առաջինով աշակերտը կը պատրաստուի խորհելու, երկրորդով՝ գործի մէջ ոչ միայն պարկեշտ այլ նաեւ կարող ըլլալու, երրորդով՝ համաշխարհութիւն, իմաստութիւն, դատողութիւն առնենալու: Ապա խօսեցաւ Վեր. Կ. Յարութիւնեան Գոլէճի նպատակին և կոչումին մասին:

Հաստատութիւնս վերջին մի քանի տարիներու միջոցին կարեւոր յառաջդիմութիւն ցոյց տուած է, օտար լեզուներու մասնաւորապէս Փրանսերէնի և անգլիէրէնի մէջ, զրադարանը նոր գիրքերով ճոխացնելու և գիտական գործիքներ և առարկաներ հայթայթելու մէջ:

Պէթրոսի Մէջ համաձայնութիւն գոյացած է ընտրուելիք Հայ Առաք. համայնքին Գաւառական ժողովին աշխարհական անդամներուն 12 ը չէզոքներէ և 6 ը երեք կուսակցութիւններէ ընտրելու համար:

ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԸ ՆԵՐԿԱՅԻՍ զբաղած է նոր կաթողիկոսի մը ընտրութեան հարցով: Ընտրութիւնը պիտի կատարուի Պէյրութի հպիսկոպոսական ժողովին մէջ, բայց Պապը պէտք է վաւերացնէ:

ԲԷՍՍՊԻ Հայ Աւետ. Եկեղեցիին մէջ ծագած դժուարութիւնները լուծելու համար Օգոստ. 9 ին պատուիրակութիւն մը դացած էր Հալէպէն, ինչպէս որ ասկէ առաջ գրած էինք (թիւ 14): Նոյն նպատակով Սեպ. 13 ին Վեր. Ա. Շիրաճեան առանձինն և Սեպ. 20 ին

Մը. Քարլթըն, Միս Ֆորմըն, Միս Նորթըն և Վեր. Ա. Շիրաճեան դարձեալ Քէսապ գացին։ Ուրախ ենք որ դպրոցի հոգարարձութեան, զժգոհներու և Հալէպի Շրջանի Վարչութեան պատուիրակներուն միջեւ հասկցողութիւն մը կարելի եղած է, որուն հիման վրայ Հալէպի Շրջանի Վարչութեան հետ գործակցութիւնը սկսած է ընթացք առնել։ Կը յուսանք որ այս վերահաստատուած խաղաղութիւնը և համերաշխ գործակցութիւնը աւելան և աւելի ամուր պիտի ըլլայ։

Քէսապ Վեր. Ե. Քասունի կը շարունակէ իր արդիւնաւոր գործունէութիւնը։ Այդ տեղի միսիոնարներու պատկանող շէնքին նորոգութեան ձեռնարկուած է. և դպրոցի նորոգութեան համար 30 Օսմ. ոսկի յատկացուած է. ծախքին մէկ մասը պիտի կտտարուի Քէսապի եկեղեցիին կողմանէ։

ՀԱՅԱՍՏԱՆ ներկադրթի արձանագրութիւնը սկսած է։ Սուրիայէ 2300 հոգիներ պիտի արձանագրուին։

Ե. Ք. ԶԱՆԻՑԻ ԷԶԸ

ԿԸ ՀԱՌԱՏՈՄ ՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՍ Է

—Սիրելի դրացիս իմ անձիս պէս։

—Ընել բոլոր մարդոց այնպէս, ինչ պէս ես կուզեմ որ իրենք ինծի ընեն։

—Պատուել ու սիրել հայրս ու մայրս, և օգնել անոնց։

—Պարկեշտ և յարգալիք վերաբերում ունենալ բոլոր մարդոց հանդէպ։

—Զվիրաւորել ունէ մէկը ո՛չ խօսքով և ո՛չ գործքով։

—Նենգութիւն և ատելութիւն չկրել սրտիս մէջ։

—Զեռքս ետ պահել այն բաներէն որոնք ինծի չեն վերաբերիր։

—Զսպել լեզուս հայհոյելէ, օտելէ, այլոց վրայ թերութիւն գտնելէ և վանոնք բանսարկելէ։

—Սրտովին փափաքիլ ուրիշներուն բարիքը և անոնց ունեցածներուն վրայ աչք չանկել։

—Սորովիլ անձնական ապրուստս վատելիլ պարկեշտութեամբ։

—Աստուծոյ կամքը հասկնալու աշխատիլ կեանքիս համար։

ՈՐՊԷՍԶԻ ԿԱՐԵՆԱՄ ԻՐԵՆՅ ՄԱՍԻՆ ԱՂՕԹԵԼ

Անգամ մը Հնդիկ Քրիստոնեայ մը միսիոնարի մը քով գալով անկէ խնդրեց որ իրեն աշխարհագրութիւն սորվեցնէ։ Միսիոնարը ըսաւ որ իրեն պէտք եղած բանը աշխարհագրութիւն չէ այլ քրիստոնէական վարդապետութիւններ։ Սակայն Հնդիկը իր փափաքին վրայ հաստատ մնաց։ «Բարեկամս, չեմ հասկնար թէ ինչո՞ւ համար աշխարհագրութիւն սորվիլ կը փափաքիս» ըսաւ միսիոնարը։ «Տէր իմ, ես նոր տեղերու մասին սորվիլ կը փափաքիմ, որպէս զի հոն գտնուող մարդոց համար կարեւոր աղօթել»։

ՈՉ ՄԻ ԿՈՐՈՒՍՏ

Աստուծոյ հետ քալելով

Վստահ եղիր չես զղջար,

Քալէ յար։

Աստուծոյ հետ խօսելով

Կ'սփոփես քու կեանքն թշուառ,

Խօսէ յար։

Աստուծոյ հետ ապրելով

Կը ժառանգես անմահ տարր,

Ապրէ յար։

Պաղ-Աղաբաշ

ՎԱՀԱՆ

ՄԻՄ ՄՏԱՀՈԴՈՒՄԻՐ ԵՐԲ ՀԻՒՍՆԴ
ՈՒՆԵՆԱՍ

Բժշկին դարմանումին չափ կարեւոր է հիւանդին համար կանոնաւոր խնամք ատնել, որ սակայն պիտական փորձառութիւն կը պահանջէ:

Ուստի երբ տան մէջ հիւանդապահ հուհի մը պէտք ունենալ անմիջապէս գիմեցէք

ՏԻՍՐ ՆԵՐՍԷՍ ԻՇԽԱՆԵԱՆԻ
ԴԵՂԱՐԱՆԸ, ԽԷՆՏԵՔ,

Ուր պիտի գտնէք Ամերիկեան համալսարանէն վկայեալ և հիւանդանոցներու մէջ միջանի տարուան փորձառութիւն ունեցող հիւանդապահուհի մը:

ԿԸ ՓՆՏՈՒՌ

Տիկ. Հայկանոյշ Խաչերեան կը փնտռէ իր էրիկը՝ Ատանայի Ղարս Պաղարէն՝ Յակոբ Խաչերեանը, որուն որդին կը կոչուի Խաչեր, դուստրիկը կը կոչուին Լիա և Մարի: Կը խընդրուի հետեւեալ հասցէին իմացնել:

M. Ohannes Halebian
Calle Zellarayan 1100
Buenos Aires
Rep. Argentina

ՍՍԱՑԱՆՔ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՒ ՀԱՇՈՒԵԿՇԻՒ, (25րդ
Շրջանի, 1930), Հայկ. Բարեգ. Ընդհ.
Միութեան:

ՊԱՀԱՆՋ ՄԸ

Եթովպիոյ մայրաքաղաքը Ատիս Ապիպայէն մեզի կը գրուի թէ մանածի տէն պոյնով ներկարարի պէտք կայ, թէ այս արհեստը տէն օր յառաջ կ'երթայ և թէ լաւ արհեստագէտ մը կրնայ այս առիթէն օգտուիլ:

Մաքուր, նրբաճաշակ, խնամքով
պատրաստուած

ՈՍԿԻ ԶԱՐԴԵՂԵՆԵՐ

ԱՂՈՒՈՐ ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐ

ԻՆՔՆԱՀՈՍ ԳՐԻՉՆԵՐ

ԸՆՏԻՐ ՏԵՍԱԿԷ ԱԿՆՈՑՆԵՐ

ունենալու համար գիմեցէք օսկերիչ և
ժամագործ

ԷՄԱՆՈՒԷԼ Ս. ԽՐԼՈՐԵԱՆԻ ԲՈՎ
ԹԻԻ 17, ԹԻԼԷԼ ՓՈՂՈՑ, ՀԱԼԷՊ,

ուր չափաւոր գիներով պահանջուած պիտի
գտնէք ձեր պահանջներուն՝ թէ՛ նորը
գնելու և թէ՛ հինը նորոգել տալու մէջ:

ՍՍԱՑԱՆՔ

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՑՑ. 1932ի, Սրբազան մը-
տածմունքներով համեմուած, 7րդ տա-
րի, պատրաստեց Ղ. Տ. Ղազարեան, B.
P. 165, Alep (Syrie): Դինը՝ Սուրիոյ
համար 3 ֆր. արտասահմանի՝ 4 ֆր.

صاحب الامتياز والمدير المستول
القس ق. هاروتونيان